ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 7

Բնակչության սոցիալապես անապահով և առանձին /հատուկ/ խմբերի ցանկում չընդգրկված անձանց անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ուղեգիր տրամադրող մշտական գործող մարզային հանձնաժողովի 2014թ. հունիսի 11 -ին կայացրած նիստի

Նիստի մասնակիցներ՝ հանձնաժողովի 3 անդամները:

Օրակարգում՝

1. Անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ուղեգիր տրամադրելու խնդրանքով ՀՀ Վայոց ձորի մարզպետին դիմած քաղաքացիների դիմումների քննարկում:

Զեկուցող՝ հանձնաժողովի նախագահ Մելսիկ Հարությունյան:

Հանձնաժողովի նախագահը ներկայացրեց

Պատվական Վարդազարյանի /գ.ՀերՀեր/ և Ֆոլիկ Հակոբյանի /գ.Քարագլուխ/ դիմումներն ուղղված ՀՀ Վայոց ձորի մարզպետին:

Քննարկման արդյունքում հանձնաժողովը

ՈՐՈՇԵՑ

1. Ելնելով բժշկական ցուցումներից և նրանց ընտանիքի սոցիալապես անապահով վիճակից Պատվական Վարդազարյանի և Ֆոլիկ Հակոբյանի վիրահատությունը պետական պատվերի շրջանակներում իրականացնելու համար նախապատրաստել ՀՀ Վայոց ձորի մարզպետի միջնորդագրերն ուղղված <<Հայկական ակնաբուժական նախագիծ>> ԲՀ-ի տնօրեն Ն. Եղիազարյանին:

Հանձնաժողովի Նախագահ՝ Մ. Հարությունյան

Քարտուղար՝ Ս.Շահբազյան